ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ե 40/6-1765
«26» 03 2024թ.

ՀՀ, ք.Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (+374 60) 37-77-37, Հեռ.՝ (+374 10) 44-34-80
Հեռ.՝ (+374 60) 37-26-56, Հեռ.՝ (+374 10) 44-29-04

«ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ԻՆ
ՀՎՀՀ 02204739
ՀՀ, ք. Երևան, Ա.Ահարոնյան 22փ.,բն30
Հեռ. +374 93 59 53 78
ԷԼ. ՓՈՍՏ Spi-der@bk.ru
elit.sv@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի (մասնակի) լուծելու մասին

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության և «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի, միջև 08.02.2024թ.-ին՝ կնքվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-24/4» ծածկագրով գնման պայմանագիր (Այսուհետև՝ Պայմանագիր)՝ «ՀՀ ԱՆ ՔԿ ծառայության ավտոմեքենաների վերանորոգման» ծառայությունների վերաբերյալ: Պայմանագրի կատարման ընթացքում Կատարողի կողմից թույլ են տրվել պայմանագրի պարտադիր պայմանների բազմակի խախտումներ: Մասնավորապես.

1. Ըստ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-24/4» ծածկագրով գնման պայմանագիր պարտադիր պայմանների «Կատարողը պարտավորվում է 3 ժամվա ընթացքում կատարի ախտորոշման/դիագնոստիկայի/խնդիրների հայտնաբերման տեխնիկական զննում և Պատվիրատուի կողմից նշվող էլ. փոստի հասցեին ուղարկի գրավոր հաստատված զննության արդյունքները (թերությունների ակտ)՝ նշելով իրականացվելիք աշխատանքների տեսակը (ները), չափման միավորը (ները), քանակը (ները) և ընդհանուր գումարը (ները): 05.02.2024թ.-ին

ՀՀ ԱՆ ՔԿ ծառայության աշխատակիցների կողմից ներկայացվել է «ՎԱԶ 21703-110-01» մակնիշի 055SS03 հաշվառման պետհամարանիշի տրանսպորտային միջոցը, սակայն Կատարողի կողմից վերը նշված տ/մ-ի թերությունների ակտը տրամադրվել է 04.03.2024թ.-ին:

2. Վերը նշված խնդիրը տեղի է ունեցել նաև, երբ ՀՀ ԱՆ ՔԿ ծառայության աշխատակիցների կողմից ներկայացվել է 006SS03 հաշվառման պետհամարանիշի տրանսպորտային միջոցը 31.01.2024թ.-ին, 350SS03 հաշվառման պետհամարանիշի տրանսպորտային միջոցը 15.02.2024թ.-ին, 033SS03 հաշվառման պետհամարանիշի տրանսպորտային միջոցը 02.02.2024թ.-ին, 533SS03 հաշվառման պետհամարանիշի տրանսպորտային միջոցը 02.02.2024թ.-ին, 121SS03 հաշվառման պետհամարանիշների տրանսպորտային միջոցը 13.02.2024թ.-ին, որոնց թերությունների ակտերը մինչ օրս չեն ներկայացվել :

3. «ՎԱԶ 21703-110-01» մակնիշի 055SS03 հաշվառման պետհամարանիշի տրանսպորտային միջոցի պարագայում խախտվել է նաև «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-24/4» ծածկագրով գնման պայմանագրի պարտադիր պայմանը՝ տրանսպորտային միջոցի պահպանումը՝ տանիքածածկ և փակ տարածքում: Մասնավորապես՝ 05.02.2024թ.-ին տեղափոխված «ՎԱԶ 21703-110-01» մակնիշի մեքենան գտնվել է ոչ տանիքածածկ և բաց տարածքում, ինչը հաստատվում է 29.02.2024թ.ին, 01.03.2024թ., 02.03.2024թ., 04.03.2024թ., 06.03.2024թ., 07.03.2024թ., 12.03.2024թ.-ներին, ՀՀ ԱՆ ՔԿԾ աշխատակիցների կողմից կատարած այցերի ժամանակ արված լուսանկարներով:

4. Կատարողի կողից խախտվել է նաև «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-24/4» ծածկագրով գնման պայմանագրի պարտադիր պայմանը, ըստ որի «տրանսպորտային միջոցի անսարքության ահազանգից 1 ժամվա ընթացքում Կատարողը պետք է ընդունի տրանսպորտային միջոցը տեխսպասարկման կայանում»: Մասնավորապես ՀՀ ԱՆ ՔԿ ծառայություն աշխատակիցների կողմից 21.03.2024թ.-ին ժամը 16:00-ին հրատապության կարգով ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿ հիմնարկը սպասարկող շտապ օգնության մեքենան տեղափոխվել է «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի կայան, սակայն այն

չի ընդունվել, պատճառաբանվելով, որ ավարտվել է աշխատանքային ժամը(ժ.17:30): Հաջորդ օրը՝ 22.03.2024թ.-ին ժամը 11:00-ին նույն տ/մ-ը կրկին տեղափոխվել է «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի կայան, սակայն նորից չի ընդունվել, պատճառաբանվելով, որ տ/մ-ի անսարքության վերաբերյալ գրավոր պահանջը առձեռն չի ընդունվում, այլ անհրաժեշտ է այն ուղարկել էլ. փոստի միջոցով (ըստ պայմանագրի. Աշխատանքները Կատարողի կողմից իրականացվում են Պատվիրատուի կողմից ներկայացվող գրավոր պահանջի հիման վրա, որն ուղարկվում է Կատարողի կողմից նշվող էլ. փոստի հասցեին կամ առձեռն): Հարկ է նշել, որ մինչ այդ գրավոր պահանջները ներկայացվել են առձեռն եղանակով: Տվյալ դեպքի առիթով ՀՀ ԱՆ ՔԿ ծառայության աշխատակիցների կողմից տեղում կազմվել է արձանագրություն: 22.03.2024թ.-ին ժամը 14:26-ին ՀՀ ԱՆ ՔԿ ծառայության կողմից ուղարկվել է գրավոր պահանջը, ինչպես նաև պահանջվել է պարզաբանում տրանսպորտային միջոցը չընդունելու վերաբերյալ, իննչին ի պատասխան «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի կողմից ուղարկվել է պայմանագրի հետ առնչություն չունեցող գրություն:

5. Հարկ է նշել, որ Կատարողի կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրերի և ակտերի մեջ բազմիցս ներկայացվել են չմատուցված ծառայություններ, որոնց մի մասը բանակցություններ արդյունքում հեռացվել են:

Ելնելով վերոգրյալից, ՀՀ ԱՆ ՔԿ ծառայությունը **2024թ.-ի մարտի 26-ին, միակողմանի մասնակի լուծում է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի միջև 08.02.2024թ.-ին կնքված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-24/4» ծածկագրով պայմանագիրը՝ <u>15 710 880,40</u> ՀՀ դրամ գումարի չափով,** ինչպես նաև պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջների՝ «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, պետք է ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե կատարողը չի վճարում պայմանագրի և որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 1 600 000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 2 400 000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2024թ.-ի ապրիլի 5-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 1 600 000 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 2 400 000 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ընդհանուր 4 000 000 ՀՀ դրամ, ապա «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարը անհրաժոշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2024թ.-ի ապրիլի 5-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ԱՆ ՔԿ ծառայության կենտրոնական մարմին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ,

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ **ԿԱՄՈ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ**